Հարցազրույց և ընդունող հանձնաժողով

Ընդունելության քննությունների վերջնական ամփոփումից հետո հարցազրույցների փուլ անցած բոլոր դիմորդների համար կազմակերպվում են երկու տիպի հանդիպում-հարցազրույցներ: Հարցազրույցի առավելագույն միավորը 64-ն է: Դիմորդների ծնողներն այս հանդիպումներին ներկա չեն լինում:

Առաջին տիպի հանդիպումները՝ խաղ-վարժանքները, վարում են դպրոցի հոգեբանները. հնարավոր է նաև այլ մանկավարժների ներգրավում դիտորդի կարգավիճակով: Այս խմբային հանդիպումներն անցկացվում են փոքր խմբերով: Հանդիպումների ընթացքում նախատեսված են խմբային խաղ-վարժանքներ, որոնց միջոցով հնարավոր կլինի տեղեկություններ հավաքել դիմորդների վերաբերյալ: Խմբային խաղ-վարժանքների կշիռը հարցազրույցի ընդհանուր միավորում 30% է:

Երկրորդ տիպի հանդիպում-հարցազրույցները դիտարկում և գնահատում են ԸՀ-ի անդամները: Այս հանդիպում-հարցազրույցների կշիռը հարցազրույցի ընդհանուր միավորում 70% է: Այս փուլում ԸՀ-ի անդամները ծանոթանում են աշակերտի հետ, փորձում պարզել Դիլիջանի կենտրոնական դպրոցում սովորելու նրա շահադրդումը (մոտիվացիան), ձգտումները կյանքում, տեսլականը:

Հարցազրույցի արդյունքները բողոքարկման ենթակա չեն:

Հիմնական և սպասման ցուցակների հրապարակում

Ըստ երեք քննությունների և հարցազրույցի փուլի արդյունքում հավաքված միավորների՝ ձևավորվում են ընդունված աշակերտների հիմնական և սպասման ցուցակները: ԸՀ-ն այս ցուցակները հաստատում է ընդհանուր քննարկման արդյունքում, երբ յուրաքանչյուր դիմորդի համար պարզ են լինում 3 քննությունների և հարցազրույցների վերջնական միավորները:

Ըստ այդմ, ԸՀ-ն սահմանում է որոշակի **անցողիկ շեմ,** որը կապված չէ եղած թափուր տեղերի քանակի հետ: Անցողիկ շեմը, հնարավոր է, հաղթահարեն ընդունելության կարգով նախատեսված առավելագույն թվից պակաս թվով աշակերտներ:

Ընդունող հանձնաժողովի՝ դպրոց ընդունելու վերաբերյալ վերջնական որոշումը հրապարակվում է դիմորդների և նրանց ծնողների համար անհատապես, էլփոստի միջոցով:

Ընդունվածների հիմնական ցուցակից բացի կարող է սահմանվել նաև սպասման ցուցակ, այն դեպքում, երբ համալրված են տվյալ ուսումնական տարվա համար

նախատեսված բոլոր թափուր տեղերը: Սպասման ցուցակում կներառվեն այն աշակերտների անունները, ում միավորների տարբերությունն անցողիկ արդյունքների համեմատությամբ, ըստ ԸՀ-ի եզրակացության, չի խոչընդոտում աշակերտի ընդունվելուն: Եթե հիմնական ցուցակում ներառված աշակերտները ինչ-ինչ պատճառներով չկարողանան գալ ԴԿԴ ավագ դպրոց, ապա դպրոցի աշակերտ դառնալու հնարավորություն կընձեռվի սպասման ցուցակի երեխաներին:

Սպասման ցուցակի երեխաների թիվ նախապես չի սահմանվում: Չի բացառվում, որ սպասման ցուցակ ընդհանրապես չլինի: Սպասման ցուցակից աշակերտներն անցնում են հիմնական ցուցակ ըստ սպասման ցուցակում իրենց զբաղեցրած տեղի: Սպասման ցուցակում աշակերտները դասավորվում են ըստ միավորների նվազման կարգի:

Ընդունող հանձնաժողովի որոշումը վերջնական է, չի մեկնաբանվում և չի բողոքարկվում:

Ընդունող հանձնաժողով

Ընդունող հանձնաժողովը ձևավորվում է դպրոցի հոգաբարձուների խորհրդի որոշման հիման վրա: ԸՀ-ի անդամներ կարող են լինել Դպրոցի և «Այբ» կրթական հիմնադրամի, «Այբ» դպրոցի ՀԽ-ների անդամները, ԿԲ ներկայացուցիչներ, դպրոցի տնօրենության ներկայացուցիչները:

ԸՀ-ի հիմնական գործառույթներն են՝

- դիմորդների հետ հարցազրույցների առաջին փուլը վարող մասնագետների կազմի հաստատումը, դրանց դիտարկման և խմբային հարցազրույցների գնահատման չափանիշների հաստատումը,
- քննությունների արդյունքների ամփոփումը և հարցազրույցների փուլ անցած աշակերտների ցուցակի հաստատումը,
- հարցազրույցների անցկացումը, հարցազրույցների արդյունքների ամփոփումը, դիմորդների հիմնական և սպասման ցուցակների հաստատումը: